Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 060 27 48 04, 060 27 48 05
fax 060 27 48 03
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 200 դրամ

038/7266/ 12 մարտ 2025 չորեքշաբթի

ISSN 1829-2224

Ա

## Ուզում եմ ապրել, ինչպես... Հայաստանում

Մի քանի տարի առաջ հարց էի տվել՝ ինչո՞վ է Բայդենին երկրպագելն ավելի լավ, քան Պուտինին: Երիտասարդ գործընկերներիցս մեկը դրան պատասխանել էր՝ տարբերությունն այն է, որ Պուտինը տանում է դեպի բռնապետություն եւ գաղութացում, իսկ Բայդենը՝ դեպի ազատություն եւ զարգացում: Այդ տեսակետի մեջ ոչ մի արտառոց բան չկա՝ ես էլ էի 10 տարի առաջ այդպես մտածում: Իսկ վերջին տարիներին համոզվեցի, որ ոչ ոք ոչ մեկին ոչ մի տեղ «չի տանում»: Բոլորը գնում են իրենց ճանապարհով՝ իհարկե, այս կամ այն ժամանակահատվածում ունենալով ժամանակավոր դաշնակիցներ: Թե որքան ժամանակավոր են այդ դաշնակիցները, համոզվեցինք մենք՝ 2020-2023 թվականներին, իսկ հիմա համոզվում են ուկրաինացիները: Արդյոք կարելի՞ է ասել, որ ռուսները՝ մեզ, իսկ ԱՄՆ-ը՝ ուկրաինացիներին «ինչ-որ տեղ էին տանում»: Ոչ, մենք էինք գնում:

Պե՞տք են արդյոք ուղենիշներ՝ որեւէ տեղ գնալու համար: Արժեքային առումով, անշուշտ, պետք են: Օրինակ, ես ուզում եմ, որ Հայաստանը լինի հանրապետություն: Մինչդեռ կառավարման համակարգը Հայաստանում միապետական էր եղել առաջ եւ այդպիսին է հիմա: (Երբեմն թյուրիմացաբար կարծում են, որ միապետության ժամանակ իշխանությունը կարող է ձեւավորվել միայն ժառանգական կարգով: Ոչ, պատմության մեջ հայտնի են դեպքեր, երբ միապետերն ընտրվել են: Միապետությունը մեկ մարդու իշխանություն է, ինչի հետ գործ ունենք այսօրվա Հայաստանում):

Բայց ուղենիշներ՝ որպես կոնկրետ երկրների կամ տարածաշրջանների օրինակներ, գոյություն չունեն: ՌԴ Պետդումայի 1999 թվականի ընտրություններին մասնակցում էր «Աջ ուժերի դաշինքը», որի կարգախոսն էր՝ «Ուզո՞ւմ ես ապրել՝ ինչպես Եվրոպայում: Ուրեմն ձայն տուր մեզ»: Մնում էր պարզել, թե ինչ է նշանակում «ինչպես Եվրոպայում»՝ բնութագրիչները չափազանց տարբեր են:

Շատերը Հայաստանում նույնպես մտքի մեջ ունեն ինչ-որ մի «օրինակելի» երկիր: Հասկանալի է, որ այդ նախընտրելի երկրների ցանկում հիմնականում Արեւմտյան Եվրոպայի երկրներն են կամ ԱՄՆ-ը: Չեմ լսել, որ որեւէ մեկն ասի՝ «ուզում եմ ապրել, ինչպես Սինգապուրում, Քաթարում, Էմիրություններում կամ Բրունեյում», որքան էլ դրանք հարուստ երկրներ լինեն: Իսկ ի՞նչ է նշանակում՝ ուզում եմ ապրել, ինչպես ԱՄՆ-ում: Թրամփի նման նախագա՞հ ունենալ: Կամ՝ գուցե սպասվող համաշխարհային նոր կատակլիզմներից հեռու մնալու համար ուզենանք ապրել «ինչպես Նոր Զելա՞նդիայում»: Չգիտեմ, ում համար ինչպես, բայց ինձ դա բացարձակապես հետաքրքիր չի:

Հայաստանում հնարավոր է ապրել միայն... ինչպես Հայաստանում՝ մեր թերություններով, մեր առավելություններով: Եթե ուզում եք՝ մեր խաչով:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## «ՀՀ իշխանությունները նորից փորձում են ռուսների հետ սիլի-բիլի անել». Կարեն Քոչարյան




*«Ընդհանուր առմամբ հետաքրքիր, բայց բարդ ժամանակահատված է սկսվել, սակայն հետաքրքրությունը ոչ թե Հայաստանում է, այլ դրսում: Նաեւ հետաքրքիր՝ չի նշանակում լավ, որովհետեւ տեսնում ենք, թե ինչ է կատարվում Սիրիայում, որը մեր քթի տակ է: Ենթադրվում է, որ Սիրիայի վերջին դեպքերը հրահրվել են նաեւ դրսից: Կան ուժեր եւ կենտրոններ ՝ քաղաքական, աշխարհաքաղաքական, ռեգիոնալ, որոնք ուզում են Սիրիան դարձնել Հարավսլավիա, մասնատել մի քանի երկրի»,-երեկ ասաց քաղտեխնոլոգ Կարեն Քոչարյանը: Նրա խոսքով. «Դրան ամենեւին կողմնակից չէ Թուրքիան, որովհետեւ վախ կա, որ դա կարող է հետո կարող է տարածվել նաեւ իրենց վրա: Բավականին հետաքրքիր էր ու ռադիկալ Օջալանի կոչը՝ վայր դնել զենքերը: Բայց նման բաները հենց այնպես չեն լինում, որ Օջալանի նման կերպարը կոչ անի վայր դնել զենքերը»: Ինչ վերաբերվում է Հայաստանին՝ անվտանգության առումով, Կարեն Քոչարյանը հետեւյալը նշեց. «Անվտանգության մասին չի կարելի խոսել, որովհետեւ չկա անվտանգային որեւէ համակարգ: Այսօր կարդացի, որ ԱԺ նախագահը 3 տարի հետո որոշեց, որ մինչեւ մայիս Կապանում կբացվի Ռուսաստանի հյուպատոսությունը: Չգիտես ինչու նոր որոշեցին դա ասել: Ենթադրվում է, որ աշխարհում տեղի ունեցող այս գործընթացների հետեւանքով այս իշխանությունները մնացել են լրիվ անտեր աշխարհաքաղաքական առումով եւ փորձում են ռուսների հետ նորից սիլի-բիլի անել: Դա նկատվում է նաեւ արեւմտյան ուժերի ռեակցիայից, որոնք երկար ժամանակ այս իշխանության հովանավորներից էին, իսկ հիմա՝ ամենաուժեղ քննադատողները»:*

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### 3 զոհ՝ Մոսկվայի եւ Մերձմոսկովյան շրջանի վրա ուկրաինական հարձակման հետեւանքով

Ուկրաինայի կողմից Մոսկվայի եւ Մերձմոսկովյան շրջանի վրա անօդաչու թռչող սարքերով հարձակման հետեւանքով, ըստ ռուս պաշտոնյաների, առնվազն երեք մարդ է զոհվել, Ռուսաստանի չորս օդանավակայաններ ժամանակավորապես դադարեցրել էին աշխատանքը: ՌԴ պաշտպանության նախարարության փոխանցմամբ՝ ընդհանուր առմամբ 343 անօդաչու է խոցվել Ռուսաստանի օդում, դրանցից 91-ը՝ մայրաքաղաքում: Մոսկվայի քաղաքապետը հայտարարել է, որ սա ուկրաինական անօդաչու թռչող սարքերի մինչ այժմ ամենախոշոր հարձակումն էր քաղաքի վրա: Ուկրաինայի ռազմաօդային ուժերն էլ ավելի վաղ հայտնել էին Օդեսայում ռուսական անօդաչու թռչող սարքերի զանգվածային հարձակման մասին: Այս հարձակումները նախորդել են Սաուդյան Արաբիայում ԱՄՆ-ի ու Ուկրաինայի միջեւ բանակցություններին:

### Եվրոպական խորհրդարանը կքննարկի «Բաքվում հայերի պատանդների կալանավորումներն ու կեղծ դատավարությունները»

«Ադրբեջանի կողմից հայերի պատանդների կալանավորումներն ու այդ թվում՝ բարձրաստիճան քաղաքական ներկայացուցիչների կեղծ դատավարությունները» խորագրով քննարկումները տեղի կունենան այսօր, իսկ հրատապ բանաձեւի քվեարկությունը նախատեսված է մարտի 13-ին:

Մանրամասները՝ էջ 2-3:

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ**

**Տպագրական արտադրամասում տեղի ունեցած անսարքության պատճառով թերթի ս/թ մարտի 11-ի համարը լույս չի տեսել: Տեղեկացնում ենք, որ մարտի 11-ի համարում նախատեսված գովազդներն ու հայտարարությունները զետեղված են մարտի 12-ի համարում:**

**Հայցում ենք ընթերցողների ներողամտությունը**



# «Պատրիս Վերմետը Հայաստան ճամփորդած ժամանակ է նկարել Կասկադն ու ոգեշնչվել»

## Հայ զարդագործը՝ օսկարակիր դիզայների զարդի ու նրա հետ իր կապի մասին

«2016 թվականից Մոնրեալում եմ ապրում, բայց արվեստով զբաղվել եմ շատ վաղուց՝ Հայաստանում ապրած տարիներից, միշտ նկարել եմ, տարբեր ուղղությունների մեջ եմ եղել, փորձել եմ տարբեր ձեւերով արտահայտել: Աշխատանքի բերումով շատ տեղերում ենք ապրել, ու այդ ամենն անդրադարձել է իմ ստեղծագործական ուղու վրա, ամեն տեղից մի բան վերցրել եմ: Ինչ վերաբերում է էմալապատման տեխնիկային, այն բյուզանդական ժամանակներից օգտագործվել է զարդարվեստում: Վստահ եմ, որ Անատոլիայում՝ բյուզանդական արվեստի մեջ հենց հայ վարպետների աշխատանքներն են: Չեմ պատկերացնում, որ այս տեխնիկան մեր արվեստին զուգահեռ անցած լինի, ու երբեք հանդիպած չլինեն, որովհետեւ դա շատ մոտ է մեր մշակույթին, գունազգացողությանը եւ հայկական արվեստի գեղագիտությանը, մանավանդ՝ հայկական մանրանկարներին»,-«Առավոտի» հետ զրույցում նշում է կանադաբնակ նկարչուհի, զարդագործ **Գայանե Ավետիսյանը**: Օսկարակիր դիզայներ Պատրիս Վերմետը կարմիր գորգի վրայով քայլելիս ներկայացել է հնագույն Bixlers ապրանքանիշի ադամանդակուռ կրծքազարդով եւ ճարմանդներով, որի ստեղծմանը մասնակցել է նաեւ մեր հայրենակցուհին:

«Մեր ընտանիքը մի շրջան ապրում էր Թիֆլիսում, որտեղի արվեստագետներից սովորել եմ Վրաստանում շատ ընդունված էմալապատման տեխնիկան: Ես ժամանակին երկար ժամանակ խեցեգործությամբ էլ եմ զբաղվել, այնպես որ, վառարանով աշխատելն ինձ խորթ չէր: Այդպես սովորեցի այդ տեխնիկան, հետո Վրաստանից տեղափոխվեցինք Հայիթի, 4 տարի Հայիթիում ապրեցինք, այնտեղ էլ աշխատեցի այս տեխնիկայով ու կատարելագործվեցի: Ու քանի որ ԱՄՆ-ին շատ մոտ էր Հայիթին, ես տարբեր առիթներով մեկնել եմ ԱՄՆ, մասնակցել դասընթացների ու մասնագիտական աշխատարանների: Մոնրեալում էմալապատման տեխնիկան բացարձակ բացակա էր, չնայած զարդարվեստը շատ զարգացած է Քվեբեկ նահանգում: Այդ նահանգում ներդաշնակված են տարբեր ազգերի մշակույթները: Մոնրեալն ու Քվեբեկ նահանգը ֆրանսիական ճաշակ, եվրոպական շունչ ունեն, բայց միեւնույն ժամանակ ընդունել են տարբեր ազգերի ներգաղթյալների, այդ թվում՝ իտալացիների, հայերի, հույների, ու բոլորս մեր տարբեր էթնիկաներով, մշակույթներով խառնվել ենք, ինչի արդյունքում մշակութային հետաքրքիր կոնգլոմերատ է ստեղծվել:

Կանադայում բոլորը սիրում են Քվեբեկից եկած արվեստը, այն շատ գնահատված է: Մոնրեալում ես զարդարվեստ սովորեցի, էմալ արդեն գիտեի, եւ դա դարձել էր կտավի մի ուրիշ դրսեւորում, մի բան, որ



անում էի կտավի վրա, կարող էի անել նաեւ մետաղի վրա: Շատ սիրում էի էմալապատման տեխնիկայով աշխատելը: Հետո սովորեցի Մոնրեալի զարդարվեստի դպրոցում, որտեղ այժմ դասավանդում եմ: Ծանոթացա շատ հայ հեղինակների, որոնք այստեղ աշխատում են: Այս դպրոցում տարբեր ազգերի ուսուցիչներ ունեցա, իրենք էլ իրենց ներդրումն ունեցան իմ կազմավորման մեջ՝ որպես զարդագործ: Բավականին ցուցահանդեսների մասնակցեցի, թե միջազգային, թե տեղական, ու ներկայացրի Կանադան կամ Հայաստանը տարբեր միջազգային հարթակներում:

Ինչ վերաբերում է Bixlers-ին, այն իրենց օֆիսներն են հիմնադրել նաեւ Մոնրեալում, որովհետեւ այստեղ շատ լավ ոսկերիչներ կան, իսկ իրենց աշխատանքները հիմնականում կենտրոնացած են թանկարժեք զարդերի եւ ադամանդների վրա»,-«Առավոտի» հետ զրույցում տեղեկացրեց Գայանե Ավետիսյանը:

Այնուհետեւ մեր հայրենակցուհին պատմեց, թե ինչպես է մասնակցել հայտնի կրծքազարդի եւ ճարմանդների ստեղծմանը, որոնք պատվիրվել էին օսկարակիր Պատրիս Վերմետի համար:

«Bixlers-ը փնտրում էր մեկին, որը կկարողանա անել էմալով աշխատանք, այսինքն՝ համագործակցություն կլինի. իրենք իրենց ադամանդակուռ զարդը կպատրաստեին, իսկ ես կավելացնեի էմալի կեմենտները: Պատրիս Վերմետով Քվեբեկում շատ հպարտանում են, ինչպես նաեւ «Դյուն» ֆիլմի ռեժիսոր Դենի Վիլնյովով:

Ինձ հետ կապվեցին եւ հարցրին՝ արդյոք կուզենայի՞ մասնակցել այդ նախագծին: Իրենց մեդիայի ղեկավարն ասաց՝ քանի որ դու հայ ես, գուցե այս դիզայնը քեզ մի բան հիշեցնի: Հենց տեսա, մտածեցի՝ մեր Կասկադն է: Ասացի՝ մեր ճարտարապետությունից մի բան է հիշեցնում: Ասաց՝ հենց դա է, Պատրիսը Հայաստան ճամփորդած ժամանակ (հավանաբար «Ոսկե ծիրանին» մասնակցելու ընթացքում) է նկարել Կասկադն ու ոգեշնչվել:

Ապա որոշել էր, որ դա պետք է հիմք հանդիսանա իր կրծքազարդի դիզայնի համար: Ես շատ հուզված էի, որովհետեւ Կասկադի աստիճանների մոտ եմ մեծացել ու ամբողջ երիտասարդությունս այդտեղ է անցել: Կրծքազարդի դիզայնը մեր Կասկադի արեւային ժամացույցը հիշեցնող կեմենտն է: Դրա վրա եմ էմալի տեխնիկայով աշխատել»,-պատմեց Գայանե Ավետիսյանը:





Ապա հավելեց, թե ինչպես է տեսազանգով իր հետ կապվել Պատրիս Վերմետը.

«Պատրիսը տեսազանգ կատարեց, ուզեց արվեստանոցս տեսնել, շատ հաճելի կապ ստեղծվեց իր հետ: Ես շատ տպավորվեցի, որ «Ֆորբսում» նշված էր նաեւ իմ անունը եւ Հայաստանը՝ Պատրիսի ոգեշնչում: Ես աշխատել եմ Bixlers-ի ճարմանդների եւ կրծքազարդի վրա, ու գիտեմ, որ մեծ թվով հայ ոսկերիչներ կան Bixlers-ի արվեստանոցում: Երբ իրենց տնօրենը ինձ ծանոթացրեց աշխատակիցների հետ, շատ ուրախացան, որ միասին պետք է աշխատենք: Ճիշտ է, «Ֆորբսում» իմ անունն է նշված, բայց ուզում եմ շեշտել, որ տարբեր ազգեր են մասնակցել այդ նախագծին, այդ թվում՝ հայեր»:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2025թ. ապրիլի 10-ին՝ ժամը 11:00-ին, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» օրենքով (21.06.2014թ. ՀՕ-110-Ն) եւ ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի, Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում (հասցե՝ Երեւան, Գ. Նժդեհի փ. 26) տեղի կունենա «ԳԱՐՑՈՒ» ՍՊ (հասցե՝ Երեւան, Արշակունյաց պող. 19) եւ «ՌԵՏԻՆ 1» ՓԲ (հասցե՝ Երեւան, Արշակունյաց պող. 25) ընկերությունների կողմից ներկայացված՝ Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ. 19 եւ 25/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության վերաբերյալ («Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետ) առաջին հանրային լսումը: Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ՝ զանգահարելով (+374) 99994222:

Շահագրգիռ հանրության կողմից առաջարկությունները, դիտողությունները եւ կարծիքները կարող են ներկայացվել բանավոր՝ հանրային քննարկման ընթացքում կամ գրավոր՝ Երեւանի քաղաքապետարան, ծանուցումից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում: Համայնքի ղեկավարի կողմից հանրային լսման համար լիազորված անձ՝ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ-էկոլոգ Էլլադա Արամյան (էլ.փոստ՝ ellada.aramyan@yerevan.am, հեռ. 011-514-263):

### ԾԱՆՈՒՑՈՒՄ
### ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ՄԱՍԻՆ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ Կառավարության «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» 2014 թ. նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ (խմբագրված ՀՀ կառավարության 28.12.2023, N 2343-Ն որոշմամբ) սահմանված կարգով 2025 թվականի ապրիլի 15-ին ժամը 11:00-ին ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի վարչական շենքում, ժամը 12:30-ին՝ Քարաբերդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, ժամը 15:00-ին՝ Բազում վարչական ղեկավարի նստավայրում տեղի կունենան հանրային լսումներ (քննարկումներ): Հանրային լսումը կազմակերպվում է ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Փամբակ, Քարաբերդ և Բազում բնակավայրերի տարածքներում ստորև բերվող ծայրակետային կոորդինատներով սահմանափակված տեղամասերում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության նախատեսվող աշխատանքների վերաբերյալ.

1. X=4522131.8663 Y=8455916.9519, 2. X=4522827.0754 Y=8455947.0806
3. X=4523623.8579 Y=8456398.3135, 4. X=4524300.6693 Y=8456056.1073
5. X=4524458.9654 Y=8456966.3854, 6. X=4523843.0000 Y=8457898.0000
7. X=4522613.0000 Y=8459068.0000 , 8. X=4521994.8180 Y=8458933.3362
9. X=4521599.9615 Y=8459537.9918, 10. X=4522285.8243 Y=8459775.8821
11. X=4522066.8590 Y=8460566.5125, 12. X=4520740.5338 Y=8459657.6692
13. X=4520869.8758 Y=8459284.7628, 14. X=4521504.8467 Y=8458658.6876
15. X=4522818.7771 Y=8458015.7669, 16. X=4523306.2928 Y=8457033.4002
17. X=4522739.7981 Y=8456796.7094, 18. X=4521894.1108 Y=8456597.8601

ԵՎ

19. X=4522613.0000 Y=8459068.0000
20. X=4522285.8243 Y=8459775.8821
21. X=4522119.4177 Y=8459722.5542
22. X=4522347.7017 Y=8459010.2078

| | |
|---|---|
| Ձեռնարկող | «Կոմպոզիտ Մետալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն |
| Նախատեսվող գործունեության իրականացման վայրը | ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնք / Փամբակ, Քարաբերդ, Բազում բնակավայրեր/ |
| Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցություն | Հնարավոր է որոշակի ազդեցություն շրջակա միջավայրի բաղադրիչների վրա, սակայն նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բոլոր ազդեցությունները պետք է գնահատվեն և ենթարկվեն մեղմացուցիչ միջոցառումների, որի արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասը կհասցվի նվազագույնի: |
| Փաստաթղթերին ծանոթանալու վայրը, օրը և ժամը | ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի պաշտոնական կայքում (http://pambak.am) և Փամբակի համայնքապետարանում, սույն հայտարարության հրապարակման օրվանից ամեն օր՝ ժամը 14:00-ից 16:00-ը՝ մինչև դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու ժամկետի ավարտը |
| Դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու ժամկետը | 20 աշխատանքային օր՝ հաշված սույն ծանուցման հրապարակման օրվանից |
| Քննարկումների պատասխանատու | ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ղեկավար |
| Քննարկումների պատասխանատուի էլ. փոստի հասցեն և հեռախոսահամարը | էլ. փոստ՝ pam-bak@mail.ru, info@pambak.am<br>հեռ.՝ +374-77-75-88-63 |